

Թիկնածուին չահելու համար խաչատուր Կեսարացի նուիրակ մը, հաւանօրէն Փիլիպպոս վարդապետը, ուղարկած էր անոնց: Նուիրակը Հայաստան, Ասորիք, Կ. Պոլիս չըջելէ ետքը պիտի անցնէր Լեհաստան եւ անկէ ալ Հռոմ ի յարգանս Ս. Գահին: Այս մասին տեղեկութիւններ հաղորդած է Ս. Ժողովին Պրոսպեր, Սպահանի Բոկոտն Կարմեղեանց մեծաւորը⁸. «որոնց մէջ կը յայտնէր Թէ Հայոց խաչատուր եպիսկոպոսը ուրիշ հայ եպիսկոպեաներու համաձայնութեամբ Հայաստան եւ Ասորիք քահանայ մը ուղարկած է, որպէս զի հաւանեցնէ Հայոց եպիսկոպոսները, որ իրենց ձայնը ի նպաստ Մովսէս վարդապետի տան եւ անիկա ընտրուի կաթողիկոս, այն է բոլոր հայ եպիսկոպոսներու եւ պատրիարքներու ղլխաւոր: Այս գործը ի գլուխ հանելու համար նոյն քահանան պիտի հանդիպի նաեւ Կ. Պոլսի եւ Լեհաստանի Հայերուն. եւ պատուէր առած է Լեհաստանէն ալ Հռոմ անցնելու ի համբոյր ռաից սրբազան Քահանայապետին»:

Այս առթիւ կը գրէր Ս. Ժողովը (15 Մայիս 1629) Պրոսպերին⁹, Թէ «մեծ հաճոյքով ի գիտութիւն առնուեցաւ խաչատուր եպիսկոպոսի կողմէն ուղարկուած քահանայի մասին հաղորդուած լուրը. վասն զի կը յուսան Թէ Մովսէս վարդապետի կաթողիկոս ընտրուե-

⁸ Acta S. C., vol. 6 (an. 1628—1629), p. 262.

⁹ Դիւան Տ. Հ. Ս. Ժողովոյ. Հատոր Ը (Lettere volgari, ամ 1629), թղ. 82: